ռովք վաւերեալ (Խաթթի Շէրիֆ) եւ 'ի ձեռս Ցունաց։

Ցետ առնլոյ Ցունաց զայս հրովարտակ, եւուն կարգել 'ի դրանէ զԻպրահիմ Աղա իբրեւ պաշտօնեայ եւ ոստիկան այսմ գործոյ։ եւ նովաւ հանդերձ դիմեցին առ Կուսակալն Դամասկոսի Զէթէֆի Ապտուլլահ Փաշա, և 'ի նմանէ առին գիր հրամանի առ դատաւորս Երուսաղէմի, զի անթերի կատարեսցեն զհրաման Արքային։ Եւ ապա մեկնեալ անտի հասին յԵրուսաղէմ, և 'ի դատարանի 'ի բազմամբոխ ատենի ընթերցան զհրովարտակն և զայլ գրեանս, և անտի չոքան 'ի գերեզմանն Ս. Աստուածածնի։ եւուն դատարկել և հանել արտաքս զամենայն անօթս և եկեղեցական սպասս, զկանթեղս և զաշտանակս Լատինաց, առին նաեւ զբանալի արտաքին դրան։ Եւ անտի չոքան 'ի Բեթղեհէմ, ուր 'ի հրապարակի վերստին ընթերցաւ հրովարտակն, և ապա եւուն դատարկել Լատինաց զեկեղեցին մեծ։ էառ ոստիկանն զփականս դրանց 'ի ձեռաց Լատինաց և եւ ցՅոյնս, և նոքա եդին նոր փականս 'ի դրուն Այրին Ծննդեան, և անտի եկին 'ի տաճարն Սուրբ Յարութեան, նոյնպէս կարգադրեցին անդ զխնդիրս Ցունաց։ Այսպէս բարձաւ իշխանութիւն Լատինաց 'ի գերեզմանէ Ս. Աստուածածնի եւ յեկեղեցւոյն Բեթղեհէմի յամի Տեառն 1758։ յ7 Հոկտեմբեր ամսոյ, որպէս գրէ Զուզայեցի Ստեփաննոս վարդապետ ըստ արար Ծննդեան։ Իբրեւ կատարեցին Յոյնք զայս ամենայն՝ եւ նուաճեցին զԼատինս, ձեռն արկին գործել զայլ ինչ՝ զոր ոչ էր հրամայեալ Արքայի, զի տենչանք տիրապետութեան ստիպէր զնոսա հալածել նաեւ զայլ քրիստոնեայս 'ի Ս. Տեղեաց եւ զրկել զնոսա 'ի մասնակցութենէ նոցին՝ եւ ինքեանք միայնակ տիրապետել։ Սակայն վէճն Ցունաց միայն ընդ Լատինաց էր, և 'ի հրովարտակին զոր առին Յոյնք՝ չէր ինչ հրաման եւ կամ նշանախեց ինչ վասն Հայոց։ Այլ Իպրահիմ աղա յետ արտաքսելոյ զԼատինս 'ի տեղեաց անտի՝ արտաքսեաց նաեւ զՀայս, զի եւ հանել զեկեղեցական զարդս և զկանթեղս 'ի գերեզմանէ Ս. Աստուածածնի, և էառ զբանալի արտաքին դրանն և եւ ցՅոյնս, և արգել այնուհետեւ զՀայս և զհետեւակս նոցին չմտանել յեկեղեցի անդր։ Յոյնք բարւոք որսացեալ զկամս